

# «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

## ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

### Ընկերության հեղափոխական գարգացման խնդիրները և նպատակները

**Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության հեղափոխական գարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են.**

- Ընկերությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:
- Ըստ կանխատեսումների, Ընկերության կողմից իր գործընկերներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2012թ.-ին կաճի մոտ 40%-ով՝ կազմելով մոտ 19 մլրդ ՀՀ դրամ: Այդ ժամանակահատվածում Ընկերությունը նախատեսում է վերաֆինանսավորել բնակչությանն ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում տրամադրված մոտ յոթ հարյուր հիփոթեքային վարկ:
- Իր գործունեության ծավալները մեծացնելու և հիփոթեքային վարկավորումը աշխուժացնելու նպատակով Ընկերությունը միջոցներ կձեռնարկի ընդլայնելու իր գործընկերների ցանկը, ինչպես նաև կիրականացնի բնակչության իրազեկման միջոցառումներ՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:
- Իր գործունեության ֆինանսավորման նպատակով Ընկերությունը կօգտագործի ինչպես ներկայում իրեն հասանելի միջոցները (սեփական միջոցներ, գերմանական KfW բանկի վարկային գիծ), այնպես էլ պարտատոմսերի հերթական թողարկումից և տեղաբաշխումից ստացված միջոցները: Մասնավորապես, մինչև 2012 թվականի տարեվերջ Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխել ևս 1 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր: Հաշվի առնելով տնտեսությունում տիրող իրավիճակը և հնարավոր ներդրողների կողմից ներկայացվող պահանջարկը՝ կանխատեսվող ժամանակաշրջանում Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը կլինեն մինչև մեկ տարի մարման ժամկետով:

Պետք է նշել, որ ներկայում Ընկերությունը դիտարկում է նաև արտաքին հնարավոր աղբյուրներից նպատակային ծրագրերի շրջանակներում դրամական միջոցների ներգրավման հնարավորությունները:

- Ինչպես և հիմնադրման օրվանից, Ընկերության ռազմավարությունն ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը:

